

Մեր յաջորդ քիւերուն ստիպուեցանք յետաձգել հրատարակումը «Հայ Մշակոյթը եւ իր մեկենասները» շարքի վերջին յօդուածին եւ «Գրագէտն ու մարդը Խորենացիի մէջ» ուսումնասիրութեան շարունակութիւնը:

Հայազգի Մորիս Մարգիսով (Մարգի անունով նամացուած) արձանագործի կենսագրութիւնը՝ իր կինադրիներէն երկուքին վերարտադրութեամբ՝ հրատարակած էինք «Անահիտ» կ. տարուան 3—4 թիւիք Քրոնիկին մէջ։ Ներկայ թիւին մէջ կուտանք քարզմանութիւնը այն շահեկան յօդուածին զոր Ռ. Լ. Փիաչո, զուիցերիացի ծանօթ քննադատը, նուիրած է Մարգիի կեանքին ու զործին։

ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՔ

Անահիտի Դ. տարեշրջանէն մէկ օդինակ նուիրեցին, Պ. Ս. Ղարիբեան (Պասրա) Պաղտատի Հայոց եկեղեցւոյն, Հայ Տրամարիք ընկերութեան, Գաղք. Քէմփի Զէյրունցիներու դպրոցին, Մուսուլի, Պասրայի եւ Քիրքութի Հայոց ազգային վարժարանին, Պ. Ներսէս Կիւլ-

սլէնկեան՝ Դպրոցասէր Տիկնանց վարժարանին (լը Ռէնսի), Երուսաղէմի օտառանգաւորաց վարժարանին եւ Պ. Ռէիզեանին (Կ. Պոլիս), Պ. Հայկազն Գույշումնեան (Մարսէյլ) Երեւանի Պետական Մատենադարանին, Պ. Վաղարշակ Մեսրոպեան (Փարիզ) Պոլսոյ Ազգային Կեդր. Վարժարանին, Պ. Էօժէն Փափազեան (Գահիրէ) Սեվրի Մուրասունան վարժարանին, Պ. Շ. Սեւյօնֆեան (Գահիրէ) Տիկ. Շ. Փափազեանին (Փարիզ), Պ. Գրիգոր Մարգիսուան (Աղեքսանդրիա) Հալէպի Ակնցւոց Արհեստանցին եւ Պոլսոյ Ազգ. Կեդր. Վարժարանին, Օր. Ռ. Այնեան (Փարիզ) Պոլսոյ Գալֆայեան որբանոցին, Պ. Դաւիր Յովհաննէսեան (Երուսաղէմ) Ս. Յակոբեանց վանքի մատենադարանին, Արտաւազդ եպիսկոպոս (Հալէպ) Տօֆք. Մ. Զրանեանին (Հալէպ), Տիկին Եւնիկէ Փ. Պէյլի (Շիքակո) Տիկին Ա. Պետիկեանին (Լէոնիա), Պ. Մ. Յ. Թիրեան (Նիւ Եռոք), Սոփիայի Յառաջ Լսարանական Միութեան։

**

ՎՐԻՊԱԿ

Անահիտի ներկայ թիւին մէջ, էջ 60, Ս. Պողոս - Պետրոս եկեղեցիի որմանկարներու երկրորդ վերարտադրութիւնը սխալմամբ հակառակ կողմէն տպուած է։